ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

26 նոյեմբերի 2021թ. **N 248-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՍՈՒՐԻԿ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ՝ ԹԻՎ 28 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 19.11.2021Թ. ԹԻՎ 27-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Դեմոկրատական Այլընտրանք» կուսակցության համամասնական ցուցակով Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.11.2021թ. թիվ 27-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ 22.11.2021թ. դիմում-բողոքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուների իրավական դիրքորոշումները և ներկայացված պահանջները

«Դեմոկրատական Այլընտրանք» կուսակցության համամասնական ցուցակով Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.11.2021թ. թիվ 27-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ 22.11.2021թ. դիմում-բողոքում (այսուհետ՝ նաև դիմում կամ բողոք) նշված է.

«Սույն թվականի նոյեմբերի 17-ին իմ լիազոր ներկայացուցչի կողմից դիմում է ներկայացվել Թիվ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ պարոն Վրեժ Գալոյանին, որով հայտնել եմ, որ 2021 թվականի նոյեմբերի 16-ին «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի ավագանու անդամ Գագիկ Մաթևոսյանը ուղերձով դիմել է ընտրողներին հետևյալ գրառմամբ «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: Գագիկ Մաթևոսյան Դաշինք:

Նշյալ դիմումով հայտնել եմ, որ վերոնշյալ գրառումը, ավելին՝ գրառմամբ նշված գործողությունը /բարեգործությունը/ քարոզարշավի ընթացքում անթույլատրելի է, քանի որ նշյալ գործունեությամբ խախտվել են գործող «ՀՀ Ընտրական օրենսգրքի» դրույթները: Նույն դիմումով հայտնել եմ նաև, որ «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի կողմից օրենքի առերևույթ խախտման մասին կատարել եմ ֆեյսբուքյան գրառում, որից

կարճ ժամանակ անց մի խումբ անձանց կողմից վնասվել են «Դեմոկրատական Այլընտրանք» նախընտրական շտաբի պատին փակցված մեծ պաստառը, որի վնասման պատճառը ըստ իմ համոզման, իմ ֆեյսբուքյան գրառումն է եղել իրավախախտման մասին: Միաժամանակ գրությամբ խնդրել եմ դիմումիս սահմանված կարգով ընթացք տալ և հարուցել համապատասխան վարույթ՝ հիմք ընդունելով «ՀՀ Ընտրական օրենսգրքի» իմպերատիվ պահանջները:

Իմ կողմից ներկայացված դիմումի հիմքով Թիվ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ կողմից հարուցվել է վարչական վարույթ, որին մասնակցել է իմ լիազոր ներկայացուցիչ Լիլիթ Սիլանյանը:

Հարուցված վարույթի օրը՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ին, ժամեր անց կայացվել է Թիվ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 27-Ա որոշումը /Այսուհետ՝ Որոշում/, որով ներկայացվել են Հանձնաժողովի հիմնավորումները /պատճառաբանությունները/ և եզրահանգումները:

1. Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները.

Այսպես, Որոշման՝ Հանձնաժողովը հարուցված վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերի և տեղեկությունների ուսումնասիրմամբ պարզել է, որ 2021 թվականի նոյեմբերի 17-ին «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի անունից Գագիկ Մաթևոսյանի կողմից համացանցում տեղադրված է հայտարարություն հետևյալ բովանդակությամբ. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին»: Որոշմամբ նշվել է նաև, որ Հանձնաժողովը գնահատելով ներկայացված հանգամանքները որպես օպերատիվ լուծում պահանջող հարց, դիմել է «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքին պարզելու համար, արդյո՞ք «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքն իր նախընտրական միջոցները փոխանցել է Զինծառայողների հիմնադրամին, ինչին ի պատասխան «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը հայտնել է, որ փոխանցում չի կատարվել: Հեռախոսազրույցի ժամանակ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը նախազգուշացվել է Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնակարգումների մասին: Սույն վարչական վարույթի շրջանակներում 19.11.2021թ. նիստին հրավիրվել է և ներկայացվել է «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանը: հանձնաժողովի հարցին ի պատասխան, արդյո՞ք իրազեկված եք որ նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ /խոստանալ/ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել /խոստանալ/ ծառայություններ, «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանը պատասխանեց, որ դաշինքի

հայտարարությունը «պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով և նպատակ էր հետապնդում հանրությանն իրազեկելու նախընտրական քարոզչության դադարեցման մասին: Ավելին, դաշինքը համոզմունք է ունեցել, որ երկրում հայտարարվելու է ռազմական դրություն, ինչով պայմանավորված էլ որոշում է ընդունվել դադարեցնել նախընտրական քարոզչությունը և նախընտրական հիմնադրամում եղած միջոցներն ուղղել տվյալ պահին, դաշինքի լիազոր ներկայացուցչի կարծիքով, ամենաարդիական խնդիրների լուծմանը՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին: Դաշինքի ներկայացուցիչը նշեց նաև, նման վարքագծի թիրախն ամենևին ընտրողները չեն եղել, և գտնում է, որ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ տալը /խոստանալը/ չի կարող նույնացվել ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ տալու /խոստանալու/ հետ: Ակնհայտ է, որ մտադրությունը նախընտրական հիմնադրամի գումարները ոչ թե ընտրողների, այլ զինծառայողներին տրամադրել էր: Այնուամենայնիվ, 17.11.2021թ. Հանձնաժողովի կողմից ստացված նախազգուշացումից հետո նշված հայտարարությունը համացանցից հանվել է և նախընտրականհիմնադրամից փոխանցում չի կատարվել՝ /նախընտրական հիմնադրամի հաշվի քաղվածք «Արդշինբանկ» ՓԲԸ/:

Համաձայն Հանձնաժողովի հիմնավորման՝ Հանձնաժողովը գտել է, որ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը մտադրություն չի ունեցել խախտելու ՀՀ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները և անհատույց կամ արտոնյալ պայմաններով ընտրողներին դրամ չի տվել /չի խոստացել/: Եթե անգամ դաշինքի դրսևորած վարքագիծը գնահատել իբրև բարեգործության փորձ, ապա ակհայտ է, որ այն կանխվել է, ինչով պայմանավորված Հանձնաժողով արձանագրում է, որ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չէ, ուստի դիմումը սույն մասով ենթակա է մերժման:

2. Գտնում ենք, որ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի 19.11.2021թ. թիվ 27-Ա որոշումն իրավաչափ չէ և ենթակա է մասնակի անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն թվականի նոյեմբերի 16-ին «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի ավագանու թեկնածու Գագիկ Մաթևոսյանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում տեղադրվել է գրառում հետևյալ բովանդակությամբ. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: Գագիկ Մաթևոսյան Դաշինք:»

Վերոնշյալ գրառմամբ խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի իմպերատիվ պահանջները, այն է՝ ***Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է***

անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները:

1/ Վերոգրյալ ֆեյսբուքյան հայտարարությունից հստակ պարզ է դառնում, որ խոստացվել է իրականացվելիք, կամ խոստացված գումարի փոխանցում «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի կողմից «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին /Այսուհետ՝ Հիմնադրամ/: Նշենք, որ Գագիկ Մաթևոսյան սոցիալական պաշտոնական էջին հետևում են մոտ 733 հետևորդ, հետևաբար խոստացված գումարի մասին իրազեկվել են նվազագույնը 733 հետևորդ: Ավելին՝ հայտարարությանը դրական արձագանքել է 133 հետևորդ, հայտարարությունը տարածվել է թվով 40 սոցիարթակում, իսկ բացահայտ դրական հայտարարությունը մեկնաբանել են 10 հետևորդ, հետևաբար Հիմնադրամ փոխանցվող գումարի հայտարարության մասին ***արդեն իրազեկվել են հարյուրավոր ընտրողներ:***

2/ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի վարչական վարույթի ընթացքում «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանը արդեն իսկ հաստատել է հանրությանն իրազեկելու փաստը՝ նշելով, որ դաշինքի հայտարարությունը «պայմանավորված էր ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով և նպատակ էր հետապնդում ***հանրությանն իրազեկելու*** նախընտրական քարոզչության դադարեցման մասին», հետևաբար հանրության իրազեկման փաստը արդեն իսկ ապացուցված է, անկախ այն հանգամանքից, թե հայտարարությունը սոցիալական էջից հեռացվել է, թե ոչ:

3/ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանի հայտարարությունն այն մասին, թե տրամադրվելիք գումարը նախատեսված է եղել ոչ թե ընտրողներին, այլ զինծառայողներին: Սակայն ակնհայտ է, որ Դաշինքի կողմից նախատեսված գումարը պետք է փոխանցվեր Հիմնադրամին, որի շահառուներն են նաև ընտրողները, այսինքն՝ զինծառայողների ընտանիքի անդամները, հաշմանդամություն ունեցող զինծառայողները, զոհված զինծառայողների ընտանիքի անդամները և այլոք, հետևաբար գումարի տրամադրման խոստումը տրվել է բազմաթիվ ընտրողների:

Այսպես, «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանի կողմից ներկայացված որևէ փաստարկ հիմնավոր չէ և չի բխում օրենքի պահանջներից: Ավելին, «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի կողմից կատարված հայտարարությամբ խախտվել են իմ և բազմաթիվ ընտրողների ընտրական իրավունքները. տեղի են

ունեցել ինչպես քարոզարշավի օրինական ընթացքի, քարոզչական կարգի խախտումներ, հետևաբար տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդում են ընտրությունների իրավաչափ ընթացքի և արդյունքների վրա:

4/ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ընթացքում իմ լիազոր ներկայացուցիչ Լիլիթ Սիլանյանը հարց է ուղղել վարույթը իրականացնող Հանձնաժողովի նախագահ Վրեժ Գալոյանին առ այն, թե ձայնագրվու՞մ է արդյոք վարույթը, կամ արձանագրվում, որին ի պատասխան հայտնվել է, որ վարույթը ձայնագրվում և արձանագրվում է, սակայն, տեսնելով, որ վարույթը ոչ արձանագրվում է, ոչ էլ ձայնագրվում, ինքնուրույն ձայնագրել է ամբողջ վարույթի ընթացքը: Նշեմ, որ իմ լիազոր ներկայացուցիչը հասկանալով, որ չեն պահպանվում վարչական վարույթի պահանջները, իր հնչեցված հարցից հետո վարույթի սենյակ մուտք է գործել Հանձնաժողովի մեկ այլ ներկայացուցիչ և ներկայացրել է ձայնագրությունը ապահովող սարք /հավանաբար հեռախոս/:

5/ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ընթացքում խախտվել են մի շարք ընթացակարգային, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքից բխող մի շարք դրույթներ, ավելին, վարույթի ընթացքում Հանձնաժողովը նախագահողի կողմից կատարվել են այնպիսի հայտարարություններ, որոնք դուրս են վարույթը իրականացնող նախագահողի իրավասություններից, ավելին՝ կատարված հայտարարությունների բնույթից բխում է, որ ինչպես վարչական վարույթը, այնպես էլ հետագա ընտրությունների ընթացքը չեն կարող ապահովվել օրինական և իրավական ընտրական ընթացք, որը պարզ դարձավ վարույթի ձայնագրությունը լսելուց հետո:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ «Ընտրական օրենսգրքի» 19-րդ հոդվածի 6-րդ մասի իմպերատիվ պահանջները խնդրում եմ

1. Մասնակի անվավեր ճանաչել ԹԻՎ 28 Տարածքային ընտրական հանձնաժողովի 19 նոյեմբերի 2021 թվականի թիվ 27-Ա որոշումը:»:

Դիմումին կից ներկայացված է «Գագիկ Մաթևոսյան» ֆեյսբուքյան էջի սքրինշոթը, «Դեմոկրատական Այլընտրանք» կուսակցության կողմից Լիլիթ Սիլանյանին տրված լիազորագիրը և Լիլիթ Սիլանյանի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է դիմում-բողոքը և կից փաստաթղթերը, թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջված և ստացված 19.11.2021թ. թիվ 27-Ա որոշման ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերը:

2) Բողոքաբերը մասնակի ոչ իրավաչափ է համարում վիճարկվող որոշումը՝ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող «Գագիկ

Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտմանն առնչվող մասով՝ բողոքաբերի 17.11.2021թ. դիմումը մերժելու մասով:

Որպես վիճարկվող որոշման ոչ իրավաչափության հիմք բողոքի 2-րդ կետում նշված են հետևյալ երկու խումբ պատճառաբանությունները.

ա) «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի ավագանու անդամի թեկնածու Գագիկ Մաթևոսյանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում տեղադրվել է գրառում հետևյալ բովանդակությամբ. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»: Բողոքաբերի պնդմամբ՝ դրա վերաբերյալ «իրազեկվել են հարյուրավոր ընտրողներ», և այդ իրազեկումը փաստ է՝ «անկախ այն համգամանքից, թե հայտարարությունը սոցիալական էջերից հեռացվել է, թե ոչ»: Միաժամանակ, բողոքաբերը գնում է, որ թեև «Դաշինքի կողմից նախատեսված գումարը պետք է փոխանցվեր Հիմնադրամին», սակայն ակնհայտ է համարում, որ Հիմնադրամի շահառուները ընտրողներն են, հետևաբար «գումարի տրամադրման խոստումը տրվել է բազմաթիվ ընտրողների»:

բ) թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից «չեն պահպանվել վարչական վարույթի պահանջները», քանի որ նիստը չի ձայնագրել և չի արձանագրել, ինչպես նաև խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից «բխող մի շարք դրույթներ»:

3) Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված դիրքորոշման շրջանակներում նշվել է, որ որոշման հիմքում դրվել է հանձնաժողովի գնահատականները, որոնք տրվել են դիմումում նշված հանգամանքներին և «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի կողմից ներակայացված դիրքորոշումներին առ այն, որ դաշինքի հայտարարությունը «պայմանավորված էր ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով և նպատակ էր հետապնդում հանրությանն իրազեկելու նախընտրական քարոզչության դադարեցման մասին: Ավելին, դաշինքը համոզմունքն է ունեցել, որ երկրում հայտարարվելու է ռազմական դրություն, ինչով պայմանավորված էլ որոշում է ընդունվել դադարեցնել նախընտրական քարոզչությունը և նախընտրական հիմնադրամում եղած միջոցներն ուղղել տվյալ պահին, դաշինքի ներկայացուցիչների կարծիքով, ամենաարդիական խնդիրների լուծմանը՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին», ինչպես նաև դաշինքի ներկայացուցչի պնդմանն առ այն, որ «նման վարքագծի թիրախն ամենևին ընտրողները չեն եղել» և որ «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ տալը (խոստանալը) չի կարող նույնացվել ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ տալու (խոստանալու) հետ»:

Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը նշեց նաև, որ 17.11.2021թ. հանձնաժողովը «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Գագիկ Մաթևոսյանին նախազգուշացրել է հնարավոր խախտման մասին, որից հետո նշված հայտարարությունը համացանցից հանվել է: Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը նաև նշեց, որ վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցները վկայում են, որ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամից «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ» փոխանցում չի կատարվել:

4) Ուսումնասիրելով վարչական վարույթի շրջանակներում առկա նյութերը, կողմերի դիրքորոշումները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել և 2021 թվականի նոյեմբերի 3–ին թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվել են «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը, «Դեմոկրատական Այլընտրանք», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Վարդան Պապյան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները:

Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների շրջանակներում նախընտրական քարոզչության ժամանակահատվածն սկսվում է 2021 թվականի նոյեմբերի 10-ից և ավարտվում՝ դեկտեմբերի 3-ին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է նաև, որ 2021 թվականի նոյեմբերի 16-ին «Գագիկ Մաթևոսյան» կուսակացությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Գագիկ Մաթևոսյանն իր ֆեյսբուքյան էջում կատարել է հետևյալ գրառումը. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»»: Նշվածը փաստում է բողոքաբերը, և նշվածի վերաբերյալ չի առարկում նաև «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է նաև, որ 2021 թվականի նոյեմբերի 17-ին թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը որպես օպերատիվ լուծում պահանջող հարց՝ անմիջապես կապ է հաստատել ընտրություններին մասնակցող «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի հետ և նախազգուշացրել Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնակարգումների մասին, ինչից հետո «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը վերացրել է գրառումը, ինչը չի հերքում բողոքաբերը, և «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ» փոխանցում չի կատարվել, ի հավաստումն որի

ներկայացվել է նախընտրական հիմնադրամի միջոցների ծախսերի վերաբերյալ համապատասխան բանկի կողմից տրված տեղեկանք:

Վերոգրյալի հաշվառմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը 2021 թվականի նոյեմբերի 24–ի դրությամբ «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ» որևէ փոխանցում չի կատարել, ինչը հավաստվում է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն 2021 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացված «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի «Նախընտրական հիմնադրամի հաշվին կատարված մուտքերի և ելքերի մասին» տեղեկանքով:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները:»:

Գնահատելով «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի կողմից կատարված գրառումն Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնակարգումների ներքո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ գրառմամբ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքն իրազեկում է հանրությանը երկու հանգամանքների վերաբերյալ. 1) դադարեցվում է «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի նախընտրական քարոզարշավը, 2) Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամի ողջ գումարն ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: Վերլուծելով ներկայացված հանգամանքների վերաբերյալ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի իրազեկումը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ գրառմամբ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքն անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ չի տալիս (չի խոստանում) կամ ծառայություններ չի մատուցում (չի խոստանում): Գրառմամբ հայտարարվում է, որ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամի ողջ գումարն ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին, որն աջակցություն է ցուցաբերում զինծառայողներին՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, որի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Սույն օրենքի համաձայն՝ շահառուներ են համարվում այն զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով: (…)»: Նույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հիմնադրամի միջոցները կառավարում է Հիմնադրամը: Հիմնադրամը կարող է իր միջոցների կառավարումը հանձնել Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի սահմանած կարգին և չափանիշներին համապատասխան ընտրված ակտիվների՝ արտաքին, անկախ, մասնագիտացված կառավարչին կամ ինքնուրույն կառավարել դրանք:»: Ակնհայտ է, որ «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին գումարը փոխանցելուց հետո «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքն այլևս հնարավորություն չէր ունենալու այդ միջոցները կառավարելու, տնօրինելու՝ դրանք Նոր Հաճըն համայնքի ընտրողներին հասցնելու նպատակով: Ավելին, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հնարապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահառուներ են համարվում այն զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով, և առկա չէ որևէ ապացույց, որ նշված շահառուներն ընտրողներ են:

Վերոգրյալի հաշվառմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը, անգամ ցանկության դեպքում, ողջամտորեն չէր կարող կանխատեսել կամ հիմքում ունենալ, որ իր կողմից «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին» փոխանցված գումարը կտրամադրվի Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի համամասնական ընտրականրգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին ընտրելու իրավունք ունեցող անձանց:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ նախընտրական հիմնադրամի միջոցները «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին» փոխանցելու վերաբերյալ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի հայտարարությամբ մտադրություն չի եղել անհատույց կամ արտոնյալ պայմաններով ընտրողներին դրամ տալու կամ խոստանալու: Ուստի, «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի վարքագծում առկա չէ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների խախտում:

5) Անդրադառնալով վիճարկվող որոշումը մասնակի անվավեր ճանաչելու համար որպես հիմնավորում ներկայացված դիրքորոշմանն առ այն, որ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից «չեն պահպանվել վարչական վարույթի պահանջները», քանի որ նիստը չի ձայնագրվել և չի արձանագրվել, ինչպես նաև խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից «բխող մի շարք դրույթներ», Կենտրոնական

ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջվել և ստացվել է հանձնաժողովի գրանցամատյանի համապատասխան էջերի պատճենները, որոնցում արձանագրված է հանձնաժողովի 19.11.2021թ. նիստը, որի արդյունքում էլ ընդունվել է վիճարկվող որոշումը: Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովի նիստը համառոտ արձանագրվում է: Վարչական վարույթի նյութերում առկա է թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նիստը համառոտ արձանագրելու Ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի ապահովման ապացույցը:

Ինչ վերաբերում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից «բխող մի շարք դրույթներ» խախտելուն, ապա դիմումում նշված ենթադրյալ խախտումների վերաբերյալ որևէ նշում առկա չէ, նիստի ժամանակ ևս բողոքաբերը չհստակեցրեց, թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որ դրույթներն են խախտվել:

6) Սույն բողոքի քննարկմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 19-ի թիվ 27-Ա որոշումն իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ նշել է այն բոլոր էական փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել ընդունելու վիճարկվող որոշումը: Որոշումը ձևակերպված է հստակ և հասկանալի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը պահպանել է վարչական ակտին ներկայացվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-57-րդ հոդվածների և Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածների պահանջները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն բողոքով հարուցված վարչական վարույթով առկա փաստերի ուսումնասիրմամբ հիմնավորված է համարում թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի եզրահանգումները և գտնում է, որ բողոքով ներկայացված պահանջը՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի

19.11.2021թ. թիվ 27-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչել վերաբերյալ, ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Դեմոկրատական Այլընտրանք» կուսակցության համամասնական ցուցակով Նոր Հաճըն համայնքի ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի 22.11.2021թ. դիմում-բողոքը մերժել՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 27-Ա որոշումը վիճարկվող մասով թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.Մուկուչյան**